

5362

Ս. ԽԱՆՈՅԱՆ

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՑԱՆ
(ԴԵԴՈՒՇԿԱ)

ՅԿՊ19-
Մ-451

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱ Հ Հ Ա Ր Ա Ծ Ո Ւ Թ Ա Խ Ա Զ Ո Ւ Թ Ա
Յերևան 1928

3k719-
B-49 fm.

1 AUG 2005
1 DEC 2009

Ա. ԽԱՆՈՅԱՆ

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ
(ԴԵԴՈՒԻՇԿԱ)



5362



33671-62

900-ական թվականներին Թիֆլիսի փողոցները մասն երգախիս հաստ ձեռնավայրը ձեռքին, որի կար մորուքով, ժոկեյի զինարկը գլխին մի կարահասակ մարդ:

Այս կոշկակարից այն արհեստանոցը, գլուխը կախ, փայտը տկտկացնելով ման եր գալիս այդ անհայտ մարդը՝ բոլորի ուշագրությունից զերծ:

Գուցե յերբեմն այս ու այն հեղափոխականին հետամուտ մի լրաես դիտեր աչդ տարորինակ մարդուն, վոր ինքն իր մեջ ամփոփված, ով ե իմանում ինչ ծրագրներ կազմելով մտքում, գնում եր հերթական արհեստանոցը խոսելու դասակարգային մեջ կռվի մասին, արհեստանոցի բանակուներին «Ծիլ կողմը քաշելու»:

**Թյղ խորհրդավոր մարդը Մելիքն եր, բան-
վորների սիրելի Դեղուշկան, վոր ամեն տեղ ու
միշտ, մոլեռանդ դերվիշի նման, խոսում եր ու
քարոզում դասակարգային կովի մասին, ձեռքե-
րի ջղային ու բնորոշ շարժումներով։**

Այդ վոչ ծեր, վոչ յելիտասարդ, վոչ վաճա-

կան ու վոչ աշխարհիկ մարդը կարծես այս լեռ-
կրից չիներ: Իր տիպիկ արտաքինով, նույնքան
համեստ ներքինով մարդը 900-ական թվական-
ներին հիշեցնում եր հին զալիքի հեղափոխական-
ներին՝ ուսւ նարոդնիկներին, վորոնք իրենց
գործը համարում ելին «դեպի ժողովուրդ» գնա-
լը և ամեն տեսակ զրկանքներ կրելով, ուղում
ելին կրթել ուսւ մուժիկին, բանալ նրա աչքե-
րը արտօղ իրավակարդի գեն կովելու:

Տարիների ընթացքում կարծեմ Մելիքը լեռ-
քեք բնակարան չի ունեցել, վոչ թիֆլիսում, վոչ
Բագվում: Ընկերների բնակարանը նրանն է յեղել,
ընկերոջ ունեցածը իրենը, իսկ իրա ունեցածը,
վոր, իգեպ, յերբեք չի յեղել՝ ընկերինը:

Կատարյալ մի գերվիշ եր կենցաղով և թե
արտաքուստ: Շարունակ ուսուցանող, շարու-
նակ ուսման ծարավով ու յերբեք չհուսահատ-
վող:

Նրա հետ խոսողը հաճախ կլսեր այն ծրա-
գրի մասին, վոր ինքը կազմել եր իր ապագա
գործունելության համար, շարունակ առաջար-
կություն կաներ իր գրվածքները կարդալ ամեն-
քի ու լուրաքանչուրի մոտ:

Իր պարզասրառությամբ, իր յեռանդով, իր
ցանկություններով աչքի ընկնող այդ բնածին
հասարակական գործիչը, կյանքի խորի դավակի

նման, վոչ մի տեղ աջակցություն չեր գտնում
իր անձնական կրթական համարին բացը լրացնելու,
ու յերբեք չեր հուսահատվում:

Կոմմունիստական այդ անխոնջ աշխատա-
վորն ուրիշների վրա բեռ չգանձալու նպատակով
մի շարք արհեստներ եր սովորել:

Նա և կոշկակար եր, և ներկարար, և հայելի-
ների վարպետ, բայց և վոչ մի արհեստի յերկար
չեր կպչում: Թիֆլիսից Բագու, Բագվից Թիֆլիս
շրջագայող այդ մոլեռանդ քարոզիչը սկի չեր
վհատվում ու յերիտասարդի շարունակական ա-
վունով միայն վոգեորում եր իր ընկերներին, հե-
ղափոխականներ գտնում՝ դեռևս անգիտակից
բանվորների քարոզելով, դուրձի բերելով:

Առաջին սոցիալ-դեմոկրատ հայ բանվորների
խմբերի լավագույն կազմակերպիչն եր, ինչպես
և Բագվում առաջին գաղանի փոքրիկ տապարան
կազմակերպելու նախաձեռնողներից մեկը:

Ռուսաստանում հեղափոխականը ցարերի
որոք յերկար գործել չեր կարող առանց բանտ
նստելու: Յեկ ահա յերկույթերեք տարի անընդ-
հատ քաղաքից քաղաք թափառող Մելիքը վերջը
բռնվում ե Բալախանում 1904-ի գարնանը:

Յոթն ամիս բանտում նստելուց հետո մի
տարի աքսորվում ե իրենց գյուղ, Գանձակի նա-

հանդի Բանանց գլուղ, վորտեղից 1905 թվականին
գալիս ե Թիֆլիս՝ այնտեղ աշխատելու:

Թիֆլիսի հեղափոխական բանվորները վա-
ղուց արդեն ճանաչում ելին Մելիքին ու սիրում:
Մելիքը հաճախ վիճում եր դաշնակցական տրա-
մադրություն ցուց տվող բանվորների հետ ու
նրանց խելքի բերելու համար մի շարք ժողովը-
դական «մասաներ» պատմելով, որինակներ բե-
րելով «կապում» եր նրանց, հաճախ ձգելով իր
«ցանցը»:

Ինչպիսի ուրախությամբ ու հրճվանքով եր
պատմում իր հաղթությունների մասին, յեթե
կարողանում եր այս ու այն շարքային բանվո-
րին համոզել ու «մեր կողմը շուռ տալ»:

Հեղափոխականին հատուկ համառությամբ նա
մի յերկու բանվորի «խելքի բերելու համար»
ժամանակ չեր խնայում և հաճախ, յերբ համում
եր նպատակին, գալիս եր, ձեռնափայտը ամուր
խփում գետնին, գլուխը վարից վեր թեքում,
հպարտ-հպարտ կանգնում՝ ասելով. «Եսոր համ
մի մարդու խելքի յեմ բերել, համ ել ճաշել եմ»:
Ճաշելը նրա համար տոնական հանդես եր, վո-
րովհետև վոչ ինքը փող ուներ ու վոչ ել նրա
համախոհները: Իսկ յեթենրան ընկերաբար «պատ-
վելին», չեր հրաժարվում, մանավանդ յեթե
պատվողը նոր «դարձի» յեկած ընկերներից եր:

Շատ քիչ եր այն մարդկանց թիվը, մանա-
վանդ բանվոր գասակարգի միջից, վորոնք հաս-
կանային, թե ինչ գրության մեջ են իրենք ապ-
րում, ով ե պատճառը իրենց նեղ կայության, ու
թե ինչպես պետք ե կովել այդ գրությունից
գուրս գալու համար:

Այդ մարդկանց թիվը քիչ եր վոչ միայն
մեր անդրկովկասյան իրականության մեջ, այլ և
ամբողջ, ինչպես առաջ ելին ասում, Ռուսաստա-
նում:

Բանվոր Խալառուբինը, վոր ուզեց սպանել
Ալեքսանդր յերկրորդ ցարին, Պյոտր Ալեքսեյելը,
վոր հեղափոխական մարդարեյի նման իրեն
դատելու միջոցին խոսում եր ցարական իշխա-
նության տապալման մասին, հատ-հատ ծիծեռ-
նակներ ելին ընդարձակ ու լայնածավալ Ռու-
սաստանում: Կային գործարաններ, կային բան-
վորներ, կային կալվածատերեր, կային ճորտի
կանք ապրող գյուղացիներ, բայց շատ քիչ եր
հեղափոխական բանվորների, գյուղացիների
թիվը:

Այսորվա հեղափոխական կոմմունիստական
կուսակցության միլիոնավոր անդամների տեղը
մի ժամանակ բռնում ելին ամենաշատը միքանի
հազար մարդ: Ինչու: Վորովինետև շատ դժվար
եր այն ժամանակներում թե գործելը, ու թե չկար

համապատասխան հեղափոխական դիտակցություն:

Հնում կուսակցությանը այսորվա նման խըմբերով չելին անդամագրվում, կուսակցությունը այսորվա նման արտօնություններ չեր տալիս: Ընդհակառակը:

Հին ժամանակ կուսակցության մեջ մտնողը պետք է մոռանար և ընտանիք, և ծնող, և հայր, և անձնական վայելչություն: Հին հեղափոխականը կուսակցության մեջ մտնելով գիտեր, վոր վարդի թիգերի միջով չի անցնելու, այլ ընդհակառակը, բանտի, արսորի, տաժանակիր աշխատանքների ու կախաղանի բաժին և դառնալու ինքը:

Ուստի վոչվոք, կամ ավելի շուտ շատ քիչ մարդիկ, վորոնք հասկանում ելին հեղափոխության, ցարական-բուրժուական կարգերի տապալման անհրաժեշտությունը, իրենց զոհում ելին՝ մտնելով հեղափոխական կոմմունիստական կուսակցության մեջ:

Ահա թե ինչու քիչ եր զոհվելու, տանջանքի մատնվելու պատրաստների թիվը, ահա թե ինչու մենք առանձին զոհունակությամբ պետք ե իմանանք, հիշենք մեր մեջ գործող մեծ հեղափոխականներին, վորոնք իրենց կյանքի դնով հարթել

ին բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավորության ազատության ճամպան:

Ճիշտ ե, բանվորական շարժումն ամբողջ Ռուսաստանում գնացել է մի ընդհանուր ինտերնացիոնալ, միջազգային գծով, բայց և այնպես ցանկալի յե ու հետաքրքիր, թե ինչ զոհեր ե տվել հայ աշխատավորությունը կուսակցական շարժման սեղանին:

Յերբ նայում ես Հայաստանի կոմմունիստական կուսակցության անդամների ցուցակը, կուսակցության մեջ մտնելու տարիքը, կամ, ինչպես հիմա յեն ասում, յեթե տեսնում ես կուսակցական ընկերների ստաժը, նկատում ես մի համամակը:

Բանն այն ե, վոր Հայաստանի կոմմունիստական կուսակցության մեջ յեղող անդամների մեծամասնությունը վերջին խորհրդայնացումից հետո գրվող մարդիկ են: Թանի գնում ես դեպի հին տարիները, ասենք 1920—17, 17—10 և այն տարիները, վորքան թվականները պակասում են, այնքան ել պակասում ե անդամների քանակը:

Սա ինչի՞ նշան ե: Նրա, վոր հնում Հայաստանի կոմմունիստական կուսակցություն չի յեղել և ապա նրա մեջ գործող անդամների թիվը, վորոնք գործել են նախկին Ռուսաստանի սոցի-

ալ-դեմոկրատական բանվորական կուսակցության շարքերում, իհարկե բայլուկիների հետ, յեղել են շատ քիչ անհատներ, յեզակի դեմքեր:

Մանավանդ բանվորներից:

Ստեփան Շահումյանը. Սպանդարյանը, Բոգդան կնունյանը ինտելիգենտներ են, և հասկանալի յե, վոր նըանք ու նրանց հետ գործող մլուս սակավաթիվ ինտելիգենտների մասին չելխոսքս, այլ այն բանվորների, վորոնք առաջինն են յեղել, վոր բանվորական իրականության մեջ, ինտերնացիոնալ կուսակցության շարքերում գործելով, աշխատել են արժնացնել հայ բանվորի դասակարգային գիտակցությունը:

Այդ յեզակի հայ բանվորներից ե յեղել հանգուցյալ Մելիք Մելիքյանը, վորը յեթե վոչ առաջինը, գոնե առաջիններից մեկն ե յեղել, վոր կովել ե թե դաշնակցական ազգայնականության դեմ, ու թե աշխատել հայ բանվորին ազգային մեկուսացումից տանել դեպի միջազգային, առանց ազգի խտրության առաջ աարվող կազմակերպված բանվորական շարժումը:

Մելիքը մեր սակավաթիվ հայ բանվորների հետ յեղել ե առաջինը, վոր խոսք ե բացել համաշխարհային, ուստական ու հայկական կապիտալի դեմ հոգուտ բանվոր դասակարգի, հանուն պրոլետարիատի ազատագրության:

Մելիքը, վորին հին ընկերներն անվանում ելին Քեռի, բայց ամենատարածված «Դեգուշկա» անունով, միշտ իրորինակ որիգինալ մարդեր:

Նա յերկար տարիներ Բագվում և Թիֆլիսում ապրելով դեռ ելի պահպանել եր գյուղացու պարզաւություն և ամեն ընկերոջ մեջ գտնում եր իր մտերմին:

Նա ծնվել է 1868 թվին Դանձակի մոտ գտնվող Բանանց գյուղում միշտ չքավոր ընտանիքում: Մելիքի հայրը՝ քարհամ Գալուստը շնորհիվ իր արհեստի՝ քար կարելուն վաղաց եր կուրացել: Ութ տարեկան կարձահասակ ու փոքրիկ Մելիքի ուղեկցությամբ եր ման գալիս:

Հայրը կուզը, ինքը ութ տարեկան, իսկ յեղբայրը՝ 13 տարեկան հասկանալի յե, թե ինչ գժվարություններ պետք ե ծնվելին ընտանիքի նյութական զրության համար: Որական հացը, նրա կարիքը զրկելու յեր մանուկներին ուսումնից ու ձգելու աստանդական կյանքի ասպարեզը:

Այդպես ել լինում եւ Իրանից միքանի տարով մեծ յեղբոր խնամատարության տակ մենք Մելիքին տեսնում ենք Բագվում առաջինադառն կոպեկները վաստակելիս:

Միջնադարյան աղաթների մերջնն բեկորների շրջանն եր դեռ, յերբ փոքրիկներին տալիս ելին այս ու այն վարպետի, այս ու այն ուստա-

ի մոտ փեշակ սովորելու, «մարդ» դառնալու նպատակով։ Իսկ թե ինչպես ելին գյուղից յեկած չքավոր պատանիները փեշակ սովորում, «մարդ» դառնում, հայոնի յե։

Կերակրի մնացորդները—նրանց մնունդներ, մի խոտով լի տոպրակ՝ նրանց ննջարանը, արհեստանոցի այս ու այն կեղառու անկյունում։ Յեվ հինգ տաշով «կանդրախտ», այսինքն պայման կնքած ծառայելու պատրաստակամություն հայտնած Մելիքը չի դիմանում դժոխային կյանքին ու փախչում ե յերկու տարի «փեշակ» սովորելուց։

Այսուհետև սկսվում են Մելիքի կյանքի արկածալից ու անհատական անձուկ դրությունն ամոքելու, մի տեղից մյուսն անցնելու անցքերի շարանները։ Ինչ արհեստի ասես վոր չի դիմում և վոչ մեկին ել չի կառչում։

Մելիքը կայան ե գտնում Բագվի Սև քաղաք կոչված մասում իր յեղբոր կոշկի արհեստանոցում, ուր կաշին ծակելով «ոռուսերեն ե սովորում»՝ շրջակա խանութների ցուցանակները գերք դարձնելով։

Բանվորական մթնոլորտում ապրող Մելիքը չեր կարող իրենց նեղ արհեստանոցի դռներից չտեսնել այն կյանքը, վոր ապրում եր տեղական բանվորությունը։ Զեր կարող չշփվել այն ժամա-

նակվա բանվորության հետ ու չեր կարող չազդվել նրանցից իր աշխարհայացքը ձեռք բերելու միջնոցին։

Յերկու ամիս զինվորություն անելուց հետո արդեն ազատ քաղաքացի Մելիքանը մըտնում է կյանքի ասպարեզ և, ինչպես ասացինք, աև քաղաքի բանվորության հայ հատվածի աղդեցության տակ սկսում ե հասարակական հույզերով հետաքրքրվել, նրանց շարժման խնդիրներով զբաղվել։

90-ական թվականներն Անդրկովկասի նորելուկ, մասնավորապես հայ բուրժուազիայի վոսկեդարն եր։ Կղերականությունն իր միջնադարյան համքարներով շրջապատված տեղի յեր տալիս լիբերալիզմին, վորի իդեոլոգ Արծրունին մտքերի աիրակալն եր հայ միջավայրում։ Քննվում, քննադատվում ելին այնպիսի պլոբլեմներ, վորոնք պետք ե փոփոխելին հինը, հաստատելին բուրժուական ելությունից բղխող նոր կենցաղին անհրաժեշտ որենքները։

«Ազգային» վերածնունդի, հայկական բուրժուազիայի աիրակալության հանդեսն եր, վորի գլխավոր մունետիկը՝ Գրիգոր Արծրունին իր կրակոտ հոդվածներով հրահրում եր մեշանական միջավայրը։

Անդրկովկասի ազգություններից վրաց մեռ-

նող, սնանկացող աղնվականությունն ու հայ նորելուկ բուրժուազիան աղքային հարց ելին դարձըրել դասակարգերի մեջի մշուսով փոխվելը: Բաֆֆին իր աղքանական վեպերովել ավելի խորացնում եր ստեղծված մթնոլորտը, և սահմանից դուրս Թյուրքաց Հայաստանում տեղի ունեցող «հեղափոխական ցուցերը» մի տեսակ վերամբարձ տրամադրություն ելին ստեղծել հայ միջավայրում:

Հեղափոխական կազմակերպություններից «Հնչակյան» կուսակցությունն եր, վոր ապրում եր իր մեղրամսի վերջին որերը՝ չկորցնելով իր վաղեմի հմայքը ինտելիգենտական ու բանվորական այն խավերում, վորոնք միաժամանակ թե աստծուն ելին ծառայում, թե մամանալին, վորոնք կերակրվում ելին «Հնչակյան» այսպես կոչված «սոցիալիզմի» աղքանական սոուսով:

Դաշնակցությունը, վոր հայ լիբերալ ինտելիգենտների «Ճախ» խավի կուսակցությունն եր ու նոր եր միան «ասպարեզ» գալիս, դեռ չեր գրավել մասսաներին, և «Հնչակյանությունը» հեղափոխական տրամադրություն ունեցող հայ խըմբերում մի տեսակ «մոդայական» կուսակցություն եր իր նացիոնալ-սոցիալիստական ուղղությամբ:

Կղերականներից դեպի լիբերալիզմ թեք-

վող ինտելիգենցիալի գիմաց հնչակյան նացիոնալ-սոցիալիզմը մի տեսակ ձախություն եր, ուստի ավելի ձախ տրամադրություն ունեցող բանվորական ու ինտելիգենտական շրջանները հարում ելին նրան: Բագվի բանվորները, մասնավորապես հայ մասսաները մեծ մասամբ տարված ելին հնչակյանությամբ իր եժամագին սոցիալիզմով ու հեռավոր Հայաստանի հայրենասիրությամբ:

Անցողական շրջանի հատուկ մտքերի մի քառական շրջան եր ապրում հայ բանվորը՝ խճճված լիբերալիզմի, նացիոնալիզմի, միաժամանակ հընչակյան սոցիալիզմի վոստաններում:

Արծրունի, Բաֆֆի, Նազարենուայս ալիսումվիրատի լաբյուրինթոսում գեղերում եր թե ինտելիգենտի, թե բանվորի միաքը:

Արծրունին վողջունում եր հայ բուրժուազիային, Բաֆֆին Թյուրքահայաստան գնալու հրավեր կարգում, իսկ հայ բանվորը «Հնչակյ» ձեռին պարծենում եր, վոր Բագուն հայկական ե, ու այս մտախությամբ հղիացած, չեր նկատում, թե ինչպես են Մանթաշովները, Ղուկասովները, Արամյանները շահագործում իրեն՝ հայ բանվորությանը:

Այսպիսի մի քառսական ժամանակամիջոցին եր, վոր Մելիքը իբր հասարակական գործիչ

ասպարեզ և գալիս, իր շատ համեստ ուժեղը
նվիրելու «ժողովրդին»:

Ու իբր ժամանակի հարկ, հակվում ե գեպի քառսալին հնչակիղմը, վոր միանդամայն սազում եր այն ժամանակվա ձախ արամադրություններին:

Խնածելլիգենստ ու բանվոր, գաղտնի «ընկերություններ», խմբեր ելին կազմում «հնչակյանության», ինչպես և արդեն ծալը տվող «դաշնակիցմի» անունից:

Յեվ մարդիկ, ինտեղիպես ու բանվոր, այդ
խմբերում վոչինչ չելին անում, յեթե վոչ Բագ-
ֆին կարդում, յերգեր յերգում, ամսավճարներ
տալիս ու յերբեմն ել վտիտ խմբեր ուղարկում
«յերկիրը»՝ Հայաստանը ազատելու:

Այդ տիպի գործիչներից եր Մելիքը մինչև
1898 թիվը՝ Մինչև այդ նա իբր հսչակյան շրջիկ
վզել ե շատ քաղաքներ, իմիջի ալլոց այն ժամա-
նակա հայ «հեղափոխական» կենտրոնները՝ Ալեք-
սանդրապոլ, Ղարս, ուր ով ե իմանում ինչ եր
ասում, ինչի մասին խոսում:

Շփոթ իրականության մեջ շփոթ մտքերով
մարդիկ քարոզում ելին շփոթությունների մասին։
Այսպիսի հիվանդոս ու հիվանդագիրն դեղերով եր
միտքը դաստիարակվում ցարական միապետու-
թյան սրոք, չերք Ռուսաստանում նոր սկսվող


բանվորական շարժումն սկսել եր իր առաջին
խիզախ քայլերը։ Տարեցարի զարգացող ար-
դյունաբերությունը իր հերթին լայնացնում ու
խորացնում է բանվորական շարժումը և զգալ
տայիս նրա գոյությունը։

Բանվորական շարժումը մի տեսակ շիք է
հանդիսանում հեղափոխական, բայց կյանքի յե-
րկույթներն անալիզի յենթարկելու հսարավորու-
թյունից զուրկ մարդկանց շարքերում։ Յեկ Մե-
լիքը լինում է առաջիններից մեկը, վոր իբրև
բանվոր, իբրև կրթությունից զուրկ մի կոչկա-
կար, նույնիսկ գործարանային կյանք չապրող
անհայտ, ըմբռնում եղասակարգավիճ կովի ելու-
թյունը և յերես եղարձնում հնչակյան նացիո-
նալ-սոցիալիստական շփոթից ու մտնում 1898
թվին Բագվում կազմակերպված ՍԴ-ական կու-
սակցության առաջին խմբերից մեկը։

Պրոֆեսսիոնալ հեղափոխականի կյանքը ցարական որւերին արտաքուստ գորշ եր ու միապաղաղ, առանց հուզումների, առանց պաթոսի, առանց ցուցական պողաների:

Դժվար եղ մանավանդ գործել բանվորական
հայ իրականության մեջ։

Դաշնակը ու հնչակը պրոպագանդիստներն իրենց ռոմանտիկ ճառով, իրենց մառւզերներով, իրենց յերգերով ու հայրենասիրական սրտառուչ



խոսքերով ավելի հասկանալի ելին Աշուղ Քյարամի, Քյոռողու հեքիաթների վրա դաստիարակված բանվորներին։ Նրանք ավելի իգիթության ելին հակված, քան «ինչ-վոր դասակարգային» կովի։ Մանավանդ մեզանից քսան-քսանինդ տարի առաջ, յերբ ավելի հեշտ եր կարդալ Բաֆֆի «Խենթը» կամ «Կայծերը», — աշխատել նմանել սրան ու նրան վեպերի հերոսներից։

Ու հանկարծ իրենց «Կարո» ու «Ասլան» յերևակալող իգիթների մոտ դալիս ե մի ինչ-վոր մորուքով մարդ ու սկսում ե խոսել «հավելյալ արժեքի», կապիտալի ու աշխատանքի փոխհարաբերությունների մասին։ առաջարկում ե կըովել բուրժուազիայի դեմ։ Յեթե հազար լսողից գեթ մեկը, ընդունակը հասկանար, «գրվեր» մեր կունակցության մեջ, դա յել մեծ հաջողություն եր։ Յեվ այդ մանրակրկիտ, հոգեմաշաշխատանք տանողներից մեկը մեր Գեղուշկան եր, դանձակի գավառի Բանանց գյուղի քարհատ Գալուստի փոքր տղան։

Մելիքը սոսկ պըռպագանդիստ քարողիչ չեր, նա իր յեղած արհեստանոցների, գործարանների բանվորների կյանքի հետ լավ ծանոթ լինելով՝ նկարագրում եր նրանց կյանքը և գեղարվեստորեն արտահայտում։ Իհարկե, նրա դրա պատկերները կարճ ելին, հաճախ անհաջող, բայց

յերբեմն ուշակրության արժանի ։ Նա իր գրիչը փորձել եր «Մշակ» թերթում։ Մյուս կողմից աշխատում եր գեղարվեստական ձևով տալ բանվորի անհամբույր կյանքի պատկերները։ Պետք ե ասած, վոր Մելիքը շատ եր սիրում գրել, բայց հավակնություն չուներ իրեն մեծ գրող հոչակելու, իսկի ամբարտավան չեր։

Յերբ նրան համեմատում ես այսորվա նորելուկ գրողների հետ, վորոնց մի յերկու վոտանավորը յեթե տալիքել ե թերթերում, կամ նրանց հաջողվել ե առանձին գրքով լուս ընծայել իրենց ստեղծագործությունը, մտածում ես, թե վորքան համեստ հեղափոխական ու գրող եր Դեղուշկան Մելիքը։

Նրա՝ հարյուրի մոտ հասնող զրվածքներից հազիվ միքամիսը տալված լինի։ հավակնու չեր մեր այսորվա գրողների նման։

Գրածը կբերեր, կկարդար, յեթե չհավանելիր, կտաներ սուսուփուս, նորից կմշակեր, կուղղեր, ու յեթե նորից չհավանելիր, դեն կձգեր, բայց չեր վոչնչացնի։

Յեթե կուզեր, նա մեր առաջին պըռլետ-գրող-արձակագիրն ե, ու արժե նրա փոքրիկ պատկերները իմի հավաքել ու առանձին գրքով հրատարակել («Կարմիր Մեխակներ» տետրակ 1. Նոր դրադ. № 4. Յերկրորդ պարակում Աչքը

բացվեց... 1914 թ. Նոր կրադի. № 7 Բանվորի
ալբոմը, Զորբորդ վկայականը՝ Հակոբ Հակոբյանի
խմբագրությամբ, հրատարակություն տպագրական
բանվորների):

Նրա գրվածքներից մեկը 1911 թվին մի
փոքրիկ ժողովածվում հրատարակել է Հակոբ
Հակոբյանը: Ըստ իր բազմակողմանի, բայց բո-
լոր կողմերով ել թերի, մեծ համբերության տեր
այդ թափառաշրջիկ քարոզիչը մի նոր տիպ եր
հայ իրականության մեջ թե իբրև բանվորական
շարժման նվիրված հեղափոխական գործիչ ու թե
իբրև ժողովրդի միջից գուրս յեկող մի նորաձիլ
ու լավ բողբոջներից մեկը:

Նրա տոկունության, համբերատարության
աստիճանը տողերիս գրողը նկատել եր մանավանդ
1905 թվի ոգոստոսյան կոտորածի որը Թիֆլիսի
դումայում: Այդ որը, ոգոստոսի 28-ին, մենշևկո-
ները ժողով ելին հրավիրել Թիֆլիսի քաղաքա-
ցին դումայում: Ցարի սատրապներն ուղարկում
են մի վաշտ կազակ դեպի դումա՝ ցրելու ժողովը:
Կազակները վոչ միայն «ցրում են» ժողովը, այս և
ներս են խուժում դումայի դահլիճը և սկսում են
կրակել հավաքված ժողովրդի վրա: Ներկա յելլ-
ում և Մելիքը, վորին կազակները կիսորում են ու
հրացանի կոթով դրուխը կոտրում: Արյունվա-
դեղուշան ուշքի դալով՝ մի յերկու ընկերոջ հետ

գալիս ե մոտս վիրավոր: Մի շաբաթից ավելի
պառկում ե ղեմքը ուռած, վերը արյունոտ:
Վոչ մի ձախ, վոչ մի ծպտուն, կարծես այդ-
պես ել պետք ե լիներ—հեղափոխականը ցավ
չպետք ե զգար: Ու Մելիքը լուռ ու մունջ միայն
ժպտում եր ու պատմում գլխին յեկածը:

Ուշագնաց Մելիքը ձեռքից բաց չի թող-
նում իր կլասսիկական հաստ ձեռնափայտը ու
ապագայում պարծենում եր՝ ցուց տարվ փայ-
տը—ես փայտը վոչվոքի չեմ տա—պատմական
փայտ ե, ասում եր նա, նայելով իր գեղնած
ձեռնափայտին:

1905 թվի առաջին ոռւսական մեծ հեղա-
փոխության անհաջող յելքին հետեւյ մութ ու
մուալ ուեակցիան: Շատերը հեռացան, շատերը
թողեցին հեղափոխական ասպարեզը և տարվե-
ցին հազար ու մի տեսակ «ուղղություններով»:

Իսկ վոմանք տեսնելով բանվորական շար-
քերի լքումը, հեղափոխության անհաջող յելքը, վոչ
թե հուսահատվեցին, այլ ուեակցիայի տեսական
տարիներն ուզեցին ոգտագործել իրենց մտավոր
պակասը լրացնելով: Դրանց թվումն եր և միշտ
յերիտասարդ, իսկի չփատվող Մելիքը, վորը իր
ցուցը կապիտալ դարձնելով՝ մելնում ե կիւ:

Համալսարան մասնելով իրը աղատ ուն-
կընդիր:

Բ ա յ շ ւ ս ն ս կ ն ե ր ը փ ո լ ս վ ե լ ե լ ի ն ։ Ն ա խ կ ի ն
ի դ ե ա լ ի գ մ ը վ ե ր պ ա ց ե լ ե ր, ը ն կ ե ր տ կ ա ն ո ւ թ յ ո ւ ն չ կ ա ր :
Մ ա ր դ ի կ ի ն ք ն ա պ ա շ տ ե լ ի ն դ ա ր ձ ե լ, ի ն չ պ ե տ ք ե
ա ն ե ր Մ ե լ ի ք ը : Ք ա ղ յ ա ծ ծ ա ր ա վ, ա ռ ա ն ց մ ի կ ո
պ ե կ ի կ ա ր ո ղ ե , ա պ ր ե լ մ ա ն ա վ ա ն դ ը ն կ ե ր ա զ ո ւ ր կ,
ա ն ծ ա ն ո թ ա յ ն պ ի ս ի մ ի տ ե զ ո ւ մ, ի ն չ պ ե ս կ ի ե ն ե .
Մ ե լ ի ք ը ն ո ր ի ց ձ ե ռ ք ն ե ա ռ ն ո ւ մ ի ր հ պ ա ր ա ռ ւ
թ յ ո ւ ն ը — փ ա յ ա ռ ը ո ւ դ ա ռ ն ո ւ մ թ ա գ ո ւ :

Ա յ դ մ ի ջ ո ց ի ն Բ ա գ վ ո ւ մ ա շ խ ա տ ո ւ մ ե լ ի ն մ ե ր
ը ն կ ե ր ն ե ր ի ց Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն ը, Ս . Մ ա ր տ ի կ ա ն ը,
Ա լ. Զ ա փ ա ր ի ձ ե ն, Ա շ ո ւ ա լ ո ւ մ ա ր յ ա ն ը, ե լ չ ե մ խ ո-
ս ո ւ մ ո ո ւ ս, վ ր ա ց ի, թ ո ւ ր ք ա վ ը ն կ ե ր ն ե ր ի մ ա ս ի ն,
վ ո ր ո ն ք ի ր ե ն ք ե լ հ ա մ ա ր յ ա կ ո պ ե կ ն ե ր ս տ ա ն ա-
լ ո վ՝ մ ի կ ե ր պ ա պ ր ո ւ մ ե լ ի ն ո ւ գ ո ր ձ ո ւ մ :

Մ ի կ ե ր պ ք ա ր շ տ ա լ ո վ ի ր գ ո յ ո ւ թ յ ո ւ ն ը՝ Մ ե-
լ ի ք ի ն վ ե ր ջ ի վ ե ր ջ ո հ ա ջ ո ղ վ ո ւ մ ե ի ր ը ն կ ե ր ն ե ր ի
ա ջ ա կ ց ո ւ թ յ ա մ բ մ ի կ ի ո ս կ շ ի ն ե լ տ ա լ Բ ա լ ա խ ա ն ո ւ
հ ի վ ա ն դ ա ն ո ց ի մ ո տ, վ ո ր տ ե ղ Դ ե ղ ո ւ շ կ ա ն լ ր ա գ ը ր-
ն ե ր ո ւ բ ր ո ց ո ւ ր ն ե ր ծ ա խ ե լ ո վ ձ ե ռ ք ե ր բ ր ո ւ մ
ի ր ո ր ա կ ա ն ա պ ր ո ւ ս ա ս ը :

1914 թ վ ի ն « հ ա ն դ գ ն ո ւ մ ե » ո ւ ա մ ո ւ մ ն ա-
ն ո ւ մ : 1915 - 16 թ վ ա կ ա ն ն ե ր ի ն հ ա ն դ ի պ ե ց ի ն ք
Բ ա գ վ ո ւ մ, ո ւ ր ն ա գ ա ն գ ա տ ա տ վ ո ւ մ ե ր ա մ ո ւ ս ն ո ւ թ յ ա ն
հ ա ս յ ր ա ծ ն ե ղ ո ւ թ յ ո ւ ն ի ց « Ո ր ա կ ա ն 10 - 15 կ ո-
պ ե կ ի կ ա թ ե մ ա ռ ն ո ւ մ յ ե ր ե խ ի ս հ ա մ ա ր, գ ի տ ե ս, —
գ ժ գ ո ն ո ւ մ ե ր ն ա , ը ն գ գ ծ ե լ ո վ ա յ դ ո ր ի ն ա կ » և մ ե ծ

ծ ա խ ս ք ը », վ ո ր ի ն, ի ն չ պ ե ս Մ ե լ ի ք ի ն ե ր ա ս ո ւ մ, « դ ր ժ-
վ ա ր ե ւ դ ի մ ա ն ա լ » :

Ա յ դ « գ ժ վ ա ր ի ն զ ր ո ւ թ յ ո ւ ն ը » ն յ ո ւ թ ա կ ա ն
ծ ա ն ը վ ի ճ ա կ ո ւ մ ա պ ր ե լ ո վ ա ն դ ա մ, Մ ե լ ի ք ը չ ե ր
կ ա ր ո ւ մ ի ր կ ա պ ը կ ո ւ ս ա կ ց ա կ ա ն ա մ է ն մ ի ն շ ո ւ լ
ո ւ ն ե ց ո ղ յ ե ր կ ո ւ թ ի ց : Ո ւ ր գ ո ր ծ կ ա ր, ն ա ա յ ն-
տ ե ղ ե ր, մ ա ս ն ա կ ց ո ւ մ ե ր ո ւ ժ ե ր ի ն ե ր ա ծ ի ն չ ա փ :
1915 թ վ ի վ ե ր ջ ե ր ի ն թ ի ֆ լ ի ս ո ւ մ մ ի խ ո ւ մ բ
ը ն կ ե ր ն ե ր ի ն ա խ ա ձ ե ն ո ւ թ յ ա մ բ ս կ ս ե ց լ ո ւ յ ս տ ե ս-
ն ե լ « Պ ա յ ք ա ր » պ ա ր տ վ ո ղ ա կ ա ն շ ա բ ա թ ա թ ե ր թ ը ,
ո ւ ր Մ ե լ ի ք ը զ ե տ ե ղ ե լ ե մ ի շ ա ր ք հ ո դ վ ա ծ ն ե ր
« Ա ն հ ա շ տ » ս տ ո ր ա գ ր ո ւ թ յ ա մ բ : Ն ա ի ր հ ո դ վ ա ծ-
ն ե ր ո ւ մ պ ա յ ք ա ր ո ւ մ ե ր հ ա յ ի ր ա կ ա ն ո ւ թ յ ա ն մ ե ջ
գ ո ւ ծ ո ղ բ ո ւ ր ժ ո ւ ա կ ա ն ո ւ մ մ ա ն ը - բ ո ւ ր ժ ո ւ ա կ ա ն
հ ո ս ա ն ք ն ե ր ի գ ե մ : Դ ո ւ ք յ ե թ ե թ ե ր թ ե լ ո ւ լ ի ն ե ք
« Պ ա յ ք ա ր ը », կ տ ե ս ն ե ք, թ ե ի ն չ պ ե ս « Ա ն հ ա շ տ » —
Մ ե լ ի ք ը կ ո ի վ ե մ զ ո ւ մ « Մ շ ա կ ա - ի և « Հ ո ր ի զ ո ն ա - ի
և ս պ ե ց ի ֆ ի կ ի ն ե ր ի գ ե մ մ ի շ ա ր ք ի ն ա դ ի ր ն ե ր ի շ ո ւ ր ջ ը :

Ը ն կ ե ր ա կ ա ն շ ր ջ ա ն ն ե ր ո ւ մ ս ի ր վ ա ծ Մ ե լ ի ք ի
ն ե ղ կ ա ց ո ւ թ յ ո ւ ն ն ս տ ի պ ո ւ մ ե ը ն կ ե ր ն ե ր ի ն ն ր ա ն
տ ե ղ ա փ ո խ ե լ Բ ա լ ա խ ա ն ո ւ ց Բ ա գ ո ւ և պ ա շ տ ո ն
գ տ ն ե լ ք ա ղ ա ք ա յ ի ն վ ա ր չ ո ւ թ յ ա ն ը պ ա տ կ ա ն ո ղ
վ ա յ տ ի պ ա հ ե ս տ ո ւ մ, ո ւ ր ն ա վ ա ր ո ւ մ ե ր գ ո ր-
ծ ա վ ա ր ի պ ա շ տ ո ն ը :

Փ ե տ ր վ ա ր յ ա ն հ ե ղ ա փ ո խ ո ւ թ յ ո ւ ն ը ն ր ա ն գ լ ո ւ-
ն ո ւ մ ե Բ ա գ վ ո ւ մ, ո ւ ր ն ա պ ա շ տ ո ն ա վ ա ր ե լ ո վ , մ ի ա -

ժամանակ մասնակցում ե կուսակցական աշխատանքներին: «Պալքար» թերթը փեարվարից մինչեմայիս լինելով կուսակցական լերկու Փրակցիալի ձեռքում՝ Փրակցիաների ընդմիշտ բաժանվելուց հետո անցնում ե մենշևկիների ձեռքը: Բայց վիկիներն իրենց բաժանումը «նամակ խմբագրության» ձևով հրատարակում են «Պալքարում», ստորագրությունների մեջ զետեղելով նաև Մելիք-«Անհաշտի» անունը: Մելիքը չիմանալով թե ինչումն ե բանը, մի նամակով հրաժարվում ե իր ստորագրությունից և հայտնում, թե ինքը համաձայն չե ընկերների հետ ու շարունակում ե աշխատակցել «Պալքար»-ին: Հարցի սկզբունքային ելությունը հասկանալով՝ այնուհետև ընդմիշտ հեռանում ե «Պալքար»-ից, բայց գործած սխալը չի մոռանում:

Մասնավոր նամակներով ու պատահելու միջոցին Մելիքը հանցանք գործած դատապարտյալի նման շարունակական բացարություններ ե տալիս, թե ինչպես ինքն սխալվել ե ու բողոքել պառակտման դեմ: Ու աշխատում եր ամեն կերպ հարթել իր գործած սխալը:

Հեղափոխական փոթորիկը, այնուհետև խորհրդադաին իշխանության սկիզբն ու նրան հետեւ վող հախուռն դեպքերը չելին կարող չդիպչել Դեղուշկալին: Ու թուրքական արշավանքը նրան

ել ե դիպչում: Մենք չենք տեսել նրա յեղեռ նական մահը, բայց պատմողներ կան, վոր նրան սպանել են թյուրքերը 1918 թվի սեպտեմբերի 16-ին: Այսպիսի վախճան ե ունենում մոտքան տարի հեղափոխական-բանվորական շարժման ակտիվ մասնակից համեստ ու չարքաշ Դեղուշկան—Մելիքը, Մելիքը և նրա նմանները բանվորական անհայտ ծալըերից գուրս գալով, իրենց անխարդախ, անկաշառ, համառ գործունեյությամբ կարողացել են հարթել զոկաեմբերի ուղին, վորը իր հերթին հնարավորություն ե տվել ներկա սերնդին, մասնավորապես անդրկովկասկան բանվորական յերիտասարդ սերնդին ավելի լավագույն պայմաններում աշխատելու:

Մելիքների անհայտ շիրիմները պահանջում են մեղանից հիշել ու հիշատակել անցած սերունդներին: Այդ սերունդների վոսկրները պահանջում են իրենց հարդանքը, վոսկրներ, վորոնք ցարական բանակալության ներքո տնքացել են միապետական կրունկների վալորագ հարվածների ու ծանրության տակ:

Ժամանակակից յերիտասարդ բանվորն ու գլուղացին ճանաչելու յեն ու պետք ե ճանաչեն իրենց նախորդներին, վառ պահելով նրանց հի-

շատակը, նրանց կտակած հեղափոխական ավանդը իբր մի անփուաս սրբություն:

Նախորդների ավանդները նոր ու գալիք սերնդի համար հեղափոխական պատգամներն են, վորոնց պահելու յեւ անշեջ ու անմար—հեքիաթային կանթեղի նման:



«Ազգային գրադարան



NL0184492



ФБУС 10 609.